ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՀԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ

РА ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
ОСНОВНАЯ ШКОЛА
С. АЙГЕАТ

1717, ՀՀ Լոռու մարզ, գ. Այգեհատ
☏ (025360749)
E-mail: aygehat@yandex.ru

1717, РА Лорийская область с Айгеат
☏ (025360749)
E-mail: aygehat@yandex.ru

N1

:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարության գլխավոր
քարտուղար Հասմիկ Հակոբյանին

Հարգելի Հասմիկ Հակոբյան

Տեղեկացնում եմ, որ ,,ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց,, ՊՈԱԿ-ում Ջինղեկի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Տնօրեն Պ.Շահվերդյան

08.01.2024թ.

## Հայտարարություն

**Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ի զինղեկի (0.5 դրույք) թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է' ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել'

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան' աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. Հունվարի 10-ից **մինչեւ հունվարի 24-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի Հունվարի 29 **-ին՝ ժամը 12:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոցում. Հասցեն Լոռու մարզ,գ.Այգեհատ 17փ.շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել (093)437210 հեռախոսահամարով: